պԱրձանագրություն N 5
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/116» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի եղանակով ԵՊՀ կարիքների համար լաբորատոր սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 08.06.2026 թ.

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ ՝
Ի. Սեմերջյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),
հանձնաժողովի անդամներ ՝
Հ. Պետրոսյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
Ա. Շիրվանյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
հանձնաժողովի քարտուղար ՝
Ա. Աղուզումցյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. Տեղեկատվություն հակադարձ աճուրդի արդյունքում (յուրաքանչյուր չափաբաժնի մասով) ընտրված մասնակիցներից ստացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, հրավերի պահանջներին դրանց համապատասխանության մասին:

Phototek GmbH մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող փաստաթղթերը, նաև բացակայում են ապրանքների ամբողջական նկարագրերը, նշված են սխալ մոդել, ֆիրմային անվանում, արտադրող:

Ընդունվել է որոշում. կողմ՝3, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և/կամ չշտկման մասին

2.1. Գնահատման ընթացքում արձանագրվել էր, որ Phototek GmbH մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող փաստաթղթերը, նաև բացակայում են ապրանքների ամբողջական նկարագրերը, նշված են սխալ մոդել, ֆիրմային անվանում, արտադրող:

2.2. 03.06.2026 թ. մասնակցին տրվել էր հնարավորություն Օրենքով սահմանված կարգով կատարել վերոնշյալ անհապատասխանությունների շտկում:

2.3. Phototek GmbH-ն Օրենքով սահմանված ժամկետում շտկում չի կատարել:

Ընդունվել է որոշում. կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տեղեկատվություն գնահատման արդյունքների մասին

3.1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած 1-6-րդ չափաբաժինների մասով, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ:

3.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը և սույն արձանագրությունը Phototek GmbH-ի տվյալները ներկայացնել լիազոր մարմնին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար:

Ընդունվել է որոշում. կողմ՝3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ի. Սեմերջյան _____
ստորագրություն

Անդամներ՝ Հ. Պետրոսյան _____
ստորագրություն

Ա. Շիրվանյան _____
ստորագրություն

Քարտուղար՝ Ա. Աղուզումցյան _____
ստորագրություն